Գաղափարական Հարցեր

Հ.Յ.Դ. ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻՆ ԴԷՄ-ՅԱՆԴԻՄԱՆ

Ռուբինա Փիրումեան

Դաշնակցութեան պատմութեան մէջ անանախընթաց չէ կուսակցութեան ծրագիրը, նպատակները, կառոյցն ու կանոնագրութիւնը փոփոխելը եւ դրանք ժամանակի իրողութեան եւ պահանջներին պատշաճեցնելը: Ահա՛, հէնց այստեղից էլ Դաշնակցութեան ուժականութիւնն ու աշխուժութիւնը: Այսօր էլ, վերջին տարիների ազգային եւ միջազգային քաղաքական իրադարձութիւնները թելադրում են մեր կուսակցութեան՝ մէկ անգամ եւս վերատեսութեան ենթարկելու իր կառոյցն ու ծրագիրը: 25րդ Ընդհ. Ժողովը շեշտում է այդ հարցի անհրաժեշտութիւնը եւ պարտականութիւն դնում Բիւրոյի վրայ, երկու տարուայ ընթացքին գումարել այդ հարցի քննութեան բացառիկ Ընդհանուր Ժողով. իսկ այդ Ընդհանուր Ժողովի լաւագոյն արդիւնքի մասին պիտի մտահոգուի եւ իր ներդրումը բերի ամէն մէկ դաշնակցական: Այս մեկնակէտից ելած, ես էլ իմ հերթին, որպէս պարզ շարքային, իմ մտորումներն եմ փորձում արտայայտել մեր Ծրագրի էութեան հոլովոյթի մասին:

Բոլորս էլ գիտենք, որ Դաշնակցութիւնը կազմուեց համեստ պահանջներով, ժամանակի պարտադրանքի տակ, բայց ոչ երազային, այլ իրագործելի նպատակներով: Առաջին Ծրագիրը մշակուեց 1892ին. իսկ մինչ այդ Դաշնակցութիւնը ասպարէզ էր իջել իր «մանիֆեստ»ով, որի մէջ հոչակում էր միացումը զանազան քաղաքական եւ յեղափոխական խմբերի՝ ի խնդիր «Թուրքաց Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութեան»:

1892ին արդէն ունենք մեր Ծրագիրը, որ մեր վերջին ծրագրի պէս սկսում է մի նախաբանով (1982ի տարբերակը այս նախաբանը «Ընդհանուր Տեսութիւն» է կոչում): Երկու պարագային էլ սկզբունքները մնացել են նոյնը՝ պատշաճ ժամանակի հասկացողութեան: Մեր Ծրագրի մէջ, բոլոր պայմաններում էլ, պատմութիւնը մեկնաբանելու ժամանակի բառամթերքով բացատրուած է Դաշնակցութեան ընկալումը մարդու ազատութեան եւ մարդկութեան զարգացման հոլովոյթի՝ ամենանպաստաւոր, ընկերվարական սկզբունքներով, հիմնուած ժողովրդավարական վարչակարգի ստեղծած պայմանների վրայ: Առաջին ծրագրի մէջ ի հարկէ չի նշուած «ընկերվարութիւն» բառը, բայց հիմնաւորումը այդ գաղափարաբանութիւնն է:

Առաջին Ծրագիրը իբրեւ նպատակ առաջադրում է «ապստամբութեան միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական, տնտեսական ազատութիւն, դնելով ներկայումս հետեւեալ պահանջները...»: Ըստ այս ձեւակերպումի, ուրեմն, ընդհանուր նպատակը անփոփոխ է մնում. ներկայացած պահանջները կարող են փոխուել ժամանակի թելադրանքների համաձայն: «Ներկայումս» բառի գործածութիւնը այդ է նշանակում:

Իրականութեան մէջ Դաշնակցութեան պահանջները են, որոնք Ընդհանուր Ժողովից Ընդհանուր Ժողով փոխուած կամ վերահաստատուած, կուսակցութեան աշխարհայեացքի եւ մտայնութեան պատկերացումն են տալիս եւ միեւնոյն ժամանակ ցուցաբերում կուսակցութեան իրատեսութիւնն ու գործնական նպատակասլացութիւնը՝ հիմնուած թէ՛ մարդկային էութեան, բնաւորութեան, խառնուածքի եւ կարելիութիւնների, եւ թէ՛ ժամանակի քաղաքական իրավիճակի ճշգրիտ գնահատումի եւ Հայկական Հարցի լուծման համար նրա առթած միջոցների վրայ: Այս բոլորը՝ ի հակադրութիւն անիրական վարկածների եւ կամ բացարձակ նիւթապաշտ գաղափարաբանութեան վրայ հիմնուած կուսակցութիւնների, որոնք չկարողացան յաջողել: Օ-

րինակ ձախողեց Խ. Միութեան մէջ «Բանուորագիւղացիական յեղաշրջում ամբողջ աշխարհում եւ նոր համակարգ՝ առանց ազգութիւնների բնորոշման, պրոլետարիատի ուժի վրայ հիմնուած» բնաբանով գործող կուսակցութիւնը: Օրինակ չյաջողեց հնչակեանների առաջադրանքը. ձգտում՝ ստեղծելու մի համընդհանուր սոցիալիստական մեծ հայրենիք, որի մէջ Հայաստանը մէկ մասնիկն էր լինելու:

1907ին, Հ.Յ.Դ. 4րդ Ընդհ. Ժողովին կատարուեց Ծրագրի առաջին մեծ վերամշակումը: «Ընդհանուր Տեսութեան» մէջ աւելի յստակացաւ կուսակցութեան հասկացութիւնը ազգային հարցի, ժողովրդավարական սկզբունքների եւ ընկերվար տեսլականի: Փոփոխութեան ենթարկուեց Դաշնակցութեան նպատակը՝ ընդգրկելով նաեւ Ռուսահայաստանի դատի հետապնդումը: Պատճառը՝ ցարական հակահայ քաղաքականութեան շեշտաւորումը եւ ծաւալուած հալածանքները հայ ժողովրդի եւ Դաշնակցութեան դէմ: Այս փոփոխութիւնները ուրեմն արդիւնք էին 1903ից ի վեր խըմորուած մի մթնոլորտի: Բացի այդ՝ Դաշնակցութեան մէջ սկսել էր ձախ շարժումը Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատ եւ Սոցիալ-յեղափոխական շարժումների ազդեցութեան տակ: Մի շարք դաշնակցականներ, մանաւանդ Կովկասում, յարել էին այս շարժումներին եւ պահանջում էին կուսակցութիւնից համագործակցել դրանց հետ. իսկ 1903ի Հ.Յ.Դ. Ռայոնական Ժողովը յայտարարում էր, որ Դաշնակցութիւնը համակրելով հանդերձ այս շարժումներին, չի մասնակցում դրանց, քանի որ կայ հայոց ազգային դատը (Թրքահայաստանի ազատագրումը), որ աւելի կարեւոր է:

1903-1907 տեղի ունեցան մի շարք ներքին խլրտումներ եւ հրաժարականներ: Այս ձախ շարժումի դէմ կազմակերպուեց ծայրայեղ աջերի շարժումը՝ խմբապետ Միհրանի գլխաւորութեամբ: Սրանց կարծիքով ընկերվար հովերով տարուելը պարզապէս դաւաճանութիւն էր ազգային դատին:

1907ի Ընդհ. Ժողովը նպատակադրում էր իրականացնել՝ Ռուսահայաստանի ինքնավարութիւն՝ կովկասեան հանրապետութեան մէջ, որը իր հերթին դաշնակցային կապով կապուած պիտի լինէր Ռուսաստանին, իսկ Օսմանեան կայսրութեան մէջ դարձեալ ինքնավար Թրքահայաստան՝ դաշնակցային կապով կապուած Օսմանեան կառավարութեան: Պիտի լինէր ուրեմն երկու Հայաստան եւ այդուհետ «Հայաստան» ըմբռնումը միայն Թրքահայաստանին չէր յղուի, ինչպէս եղել էր տասնամեակներ շարունակ: 1907ի այս որոշումը թէ՛ նպաստաւոր եւ թէ՛ բացասական իր ազդեցութիւնը ունեցաւ: Նախ՝ ընկերվար սկզբունքների բացայայտ որդեգրումով, Դաշնակցութիւնը առիթ ունեցաւ կապակցուելու ընկերվար 2րդ միջազգայնականի հետ եւ օգտուելու այդ կազմակերպութեան անդամ կուսակցութիւնների ազդեցութիւններից իրենց պետութիւնների վրայ. յետոյ՝ կովկասահայութեան դատի եւս ընդգրկումով, մեծ թուով ռուսացած կովկասահայեր, մտաւորականներ կամ զանազան այլ տարրեր, յետ գրաւուեցին հայութեան իրականութեան մէջ: Բացասական կողմը թրքահայ մի մեծ զանգուածի դիրքն էր նախ հէնց ընկերվար պիտակի դէմ եւ երկրորդն էլ այն մտահոգութիւնից ելած, որ կովկասեան քաղաքականութեան մէջ կլանուելով՝ Դաշնակցութիւնը պիտի մոռանայ Արեւմտահայաստանը:

Այս իրավիճակի զուգահեռն ենք տեսնում այսօր, դարձեալ Ծրագրի վերամշակման պահանջի առջեւ կանգնած: Դաշնակցութեան Հայաստան վերադարձով մէկ անգամ եւս յարուցում է նրա ընկերվար գաղափարաբանութեան հարցը: Հայաստանի հայը, 70 տարիների ընթացքին սոցիալիզմի անունով ցաւ ու անարդարութիւն կրած, չի ուզում լսել անգամ սոցիալիզմ բառը: Նոյն մտայնութիւնը կայ նաեւ Սփիւռքի որոշ տարրերի մէջ, որոնք կա՛մ դրամատիրական կարգերը համարում են Հայաստանի համար օգտակար, կա՛մ իրենց կեանքն ու ապրելակերպը արդէն իսկ կաղապարուած է դրամատիրական աշխարհայեացքով. եւ այդ տարրերի համար այդ տեսակ մտայնութիւնը բոլորովին խոտոր էլ չի դաշնակցականի իրենց հաւատամքի հետ, որի մէջ տեսնում են զուտ ազգայնականը:

Ինչ վերաբերում է Թրքահայաստան-Ռուսահայաստան երկուութեան, դարձեալ զուգահեռ իրավիճակ կայ այսօր: Որոշ դաշնակցականներ, պարզ շարքային կամ ղեկավար, այն մտավախութիւնն են ապրում, որ կուսակցութիւնը իր ուժը, ճիգն ու ուշադրութիւնը ներկայ Հայաստանի վրայ կենտրոնացնելով՝ պիտի մոռանայ Սփիւռքը եւ նրա իրայատուկ դատը: Այս մըտահոգութիւնը երբեմն ծայրայեղութեան է տանում, կուսակցութեան մէջ երկճիւղում առաջացնելու՝ ունենալու Սփիւռքի Դաշնակցութիւն եւ Հայաստանի Դաշնակցութիւն: Նոյն մտածելակերպի աւելի մեղմ դրսեւորումն է երկու Բիւրո ունենալու հարցապնդումը: Այսօր կայ նաեւ մի ուրիշ ջլատիչ ազդակ, եւ դա հակադաշնակցական պայքարն է եւ տարբեր խոստումներով Դաշնակցութեան շարքերից համախոհ որսալը, որ կատարւում է յետին հաշիւներով: Մեր դէմ շպրտուած քննադատութիւնները երբեմն յաջողում են թուլացնել մեր կուռ հաւատքը եւ մղում մեզ համակերպումների (compromise) երթալ, այսինքն՝ անգիտակցաբար ծառայել մեր հակառակորդների նպատակներին:

Այն օրերին, 1907ի Ընդհ. Ժողովին եւ դրանից յետոյ էլ, դաշնակցական բարձր ղեկավարութիւնը, իր հեղինակութեամբ եւ շրջահայեացութեամբ, կարողացաւ ստեղծուած քաոսից մէկ կուսակցութիւն, միատարր եւ միակամ կուսակցութիւն ստեղծել: Մեծ յոյս ունեմ, որ այսօր էլ պիտի յաջողուի նոյնը անել:

Դաշնակցութեան յեղափոխական գործունէութիւնը ընդհատուեց Թուրքիոյ սահմանադրութեան հռչակումով. արդ՝ Դաշնակցութիւնը լեգալացաւ եւ իր պայքա-

ը սկսեց տանել խորհրդարանային համակարգի մէջ՝ սահմանադրութեան ընձեռած պայմաններում. Դաշնակցութեան պահանջները Թրքահայաստանում մաս էին կազմում այլեւս կուսակցութեան platformին, որով աշխատում էր նա՝ իր համագործակցող կամ ընդդիմադիր դիրքերից: Եւ երեւի արդէն կ'իրականանար Դաշնակցութեան նպատակադրած ինքնավարութիւնը Թրքահայաստանում, եթէ չպայթէր Ա. Համաշխարհային Պատերազմը:

Դաշնակցութիւնը իր պայքարը Կովկասում տարաւ նախ հակացար շարժման հետ համագործակցելով, ապա 1917ի յեղափոխութիւնից յետոյ Պետերսբուրգի ժամանակաւոր կառավարութեան հետ համագործակցաբար, մինչեւ որ իրականութիւն դարձաւ Կովկասեան Ֆեդերաթիւ Հանրապետութիւնը: Այսպիսի պայմաններում կարիք կա՞ր արդեօք պահելու «յեղափոխական» պիտակը: Այս նոր իրավիճակի լոյսի տակ, ուրեմն, 1907ից յետոյ անկիւնադարձային նշանակութիւն ունեցաւ 1919ի 9րդ Ընդհ. Ժողովը, մանաւանդ որ մէկ կողմից Թրքահայաստանի հայաթափումը եւ միւս կողմից կովկասեան իրավիճակի իւրայատուկ զարգացումը եւ անկախ Հայաստանի ծնունդը նոր կացութեան առջեւ էին դրել Դաշնակցութեան՝ ծրագրային հարցերի (նպատակ եւ պահանջներ) արմատական փոփոխութիւն պարտադրելով:

1919ի Սեպտեմբերին Երեւանում գումարուած Ընդհանուր Ժողովին որոշուեց չեղեալ համարել Ռուսահայաստանի եւ Թրքահայաստանի վերաբերեալ քաղաքական նուազագոյն պահանջները եւ «նուիրագործել Անկախ եւ Միացեալ Հայաստանի յայտարարութիւնը եւ նրա ամբողջացման եւ զարգացման ձգտել ամբողջ զօրութեամբ, ժողովրդավար հանրապետութեան հիման վրայ». ի հարկէ յաջորդ ժողովին թողնելով Ծրագրի վերամշակման եւ նոր նպատակների բնութագրման գործը: Հայկական Եղեռնը ապրած, եւ հիմա Կովկասում համախմբուած եւ 1919ի Ընդհ. Ժողովին հասած դաշնակցական ղեկավարութեան համար բիւրեղացած էր մէկ հարց եւ դա ազգային հարցի ընկալումն էր, ոչ թէ իբրեւ ձգտում ինքնավարութեան՝ դաշնակցային պետութիւնների սկզբունքով հիմնուած կառոյցի մէջ, այլ իբրեւ արդէն իսկ արմատացած գաղափար հայ ազգի ազատութեան եւ անկախութեան: Եւ գաղափարը բնորոշուեց իբրեւ «մեր բնական վայրերի իրական եւ հասունացած պէտք»:

Բացի այս ըմբռնումների կրած փոփոխութիւններից, Դաշնակցութիւնը 9րդ Ընդհ. Ժողովին ներկայանում էր իբրեւ պետական կուսակցութիւն: Եւ այս դրոյթը եկել էր աստիճանաբար՝ յեղափոխական ընդդիմութիւնից մինչեւ խորհրդարանական կամ ֆեդերաթիւ կառոյցի մէջ պայքար եւ մինչեւ անկախ հանրապետութեան ամէնաուժեղ եւ ազդեցիկ կուսակցութիւն՝ պետական կուսակցութիւն: 1919ի Ընդհանուր Ժողովը մի քաոս էր ներկայացնում: Բախում զանազան մտայնութիւնների եւ հատուածների: Մթնոլորտը լեցուն էր դժգոհութիւններով, անհամաձայնութիւններով, քննադատութիւններով, որոնք առաջ էին եկել Արեւմտահայաստանի պարպումից, գաղթականների սոսկալի իրավիճակից, նախկին ֆիդայիների աննախանձելի դրութիւնից եւ նրանց երբեմն թոյլ տուած անկարգութիւններից: Դժգոհութիւն կար նաեւ Դաշնակցութիւն-կառավարութիւն յարաբերութիւններից եւ կուսակցութեան այդ մարզում կատարած ուղղակի միջամտութիւններից:

Փաստօրէն գոյութիւն ունէր Երեւանի նահանգը իր պետական եւ կուսակցական կառոյցով (արեւելահայ թէ՛ մտայնութեամբ ու աշխարհայեացքով եւ թէ՛ կառոյցով): Այդտեղ եկել էին տեղաւորուելու ոչ միայն Բագուի ու Թիֆլիսի հայերը, այլեւ մի մեծ զանգուած արեւմտահայութիւն: Բագուի եւ Թիֆլիսի կուսակցական ղեկավարութիւնը՝ թրծուած ռուսական վարչամեքենայի ղեկավար դիրքերում եւ ռուսական ընկերվար գաղափարաբանութեամբ տարուած, իսկ արեւմտահայութիւնը՝ պատերազմի կրակներից դուրս եկած, իր հայրենիքի դառը ճակատագիրը ապրած: Եւ այստեղ, Ռուսահայաստանում, արեւմտահայութիւնը ինքն իրեն հարազատ չէր զգում եւ մեծ մասամբ էլ բռնում էր կուսակցութեան աջ թեւը՝ զուտ ազգայնական գաղափարախօսութեամբ: Բացի այդ, արեւմտահայութիւնը, կոուած լինելով Հայաստանի անկախութեան համար, գիտէր նրա արժէքը եւ ընդվզում էր ռուսահայերի անտարբերութեամբ կամ նրանց կոյր ռուսասիրութեամբ: Միւս կողմից Կովկասի մէջ ստեղծուած Հայաստանը խոտոր էր արեւմտահայութեան համար, որը մերժում էր աշխատել այդ «Արարատեան Հանրապետութիւն» կոչուած փոքր ու խեղճ հողամասի բարօրութեան համար: Ի հարկէ արեւմտահայութեան կղզիացումը դարմանելու համար ձեռք էին առնուել միջոցներ՝ նրանց մասնակից դարձնելու երկրի կառուցման եւ պաշտպանութեան գործին: Բայց արեւելահայ-արեւմտահայ ճեղքուածութիւնը շեշտուած էր եւ իր արտացոլքը գտաւ 9րդ Ընդհ. Ժողովին:

Որոշ չափով հնարաւոր դարձաւ այդ երկուութիւնը վերացնել: Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի գաղափարը եւ դէպի Արեւմտահայ հողերը ընդլայնուելը բաւական մեղմացրեց այդ ճեղքուածութիւնը: Ժողովի մթնոլորտում կար նաեւ մի այլ անհամաձայնութիւն՝ երկրի մէջ բարեփոխումներ առաջացնելու հարցով: Պահպանողական թեւը, մեծ մասամբ արեւմտահայեր, կողմնակից էին ընկերային հարցերի, բարենորոգումների աստիճանական գործընթացին. մինչդեռ միջազգայնականներն ու ծայրայեղ ընկերվարականները պնդում էին արմատական եւ յեղափոխական փոփոխութիւնների վրայ: Միջին ճամբայ էին բռնում ընկերային փոփոխութիւնների արագ, բայց ոչ-յեղափոխական գործընթացի կողմնակիցները, զիջելով որոշ ժամանակի համար խիստ ընկերվարական առա-

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԲԵՄ

ջադրանքները թէ՛ ընկերային եւ թէ՛ տնտեսական կառոյցի տեսակէտից: Այս իրավիճակի զուգահեռն ենք տեսնում նաեւ այսօր: Հայաստանի այսօրուայ իրավիճակը պահանջում է խիստ միջոցառումներ ընկերային եւ տնտեսական հսկայ փոփոխութիւնների. արդեօ՞ք պիտի ընթանալ մեղմ եւ հանգրուանային քաղաքականութեամբ. թէ՞ արմատական-արագ:

Հ.Յ.Դ. 9րդ Ընդհ. Ժողովում, չնայած չկատարուեցին որոշ կարեւոր հարցերի յստակացում, բայց պարզ էր որ Դաշնակցութիւնը իր Ծրագիրը աղբիւր էր ծառայեցնում երկրի կառավարման քաղաքականութեան: Առաջադրում էր «պետական ներքին քաղաքականութեան հիմք ընդունել կուսակցութեան Ծրագիրը եւ իրականացնել այն հետեւողական եւ արագ կերպով...»: Տնտեսական գետնի վրայ, Դաշնակցութիւնը «անհրաժեշտ նախապայման» էր համարում «դրամագլուխի ազատ մուտքը», իսկ «աշխատանքի եւ դրամագլուխի» յարաբերութեան մէջ բանաձեւում էր՝ «Աշխատանքի եւ դրամագլուխի անխուսափելի պայքարի մէջ մեր կառավարութիւնը պէտք է կատարելապէս ռամկավար օրէնդրութեամբ զօրավիգ լինի աշխատանքին ու աշխատաւորին»: 9րդ Ընդհ. Ժողովում պետական մի կուսակցութեան համար արդէն չի մնում յեղափոխական գործելակերպի կարելիութիւնը. բնական պայմանների մէջ Դաշնակցութիւնն էլ պիտի թողնէր իր յեղափոխական էութիւնը: Իսկ այսօ՞ր: «Յեղափոխական» որակումի առընչութեամբ այսօր էլ կայ վերապահութիւն. ինչո՞ւ կրել յեղափոխութիւն անուանումը եւ աւելորդ կասկածանքներ հրաւիրել, մտածում են ոմանք, երբ Սփիւռքում Դաշնակցութիւնը տանում է հայապահպանման եւ խաղաղ միջոցներով Հայ Դատի հետապնդման աշխատանքներ, իսկ Հայաստանում Դաշնակցութիւնը փորձում է խորհրդարանային սիստեմի մէջ իր նպատակները իրագործել, ուրեմն աւելորդ է յեղափոխական պիտակը կրել: 1919ին մեր ղեկավարութիւնը իրատեսութիւնն ունեցաւ նախատեսելու «հարկը պահանջած ժամանակ դիմել յեղափոխական միջոցների»: Գուցէ պիտի նոյն հեռատեսութիւնն ունենալ նաեւ այսօր: Մանաւանդ, որ հայ ժողովրդի շահերի համար պայքարող մի կուսակցութեան գործելակերպը սահմանափակում չպիտի ճանաչի: 9րդ Ընդհ. Ժողովում յստակ էր արդէն Ծրագրի ընդլայնումի փորձերը, որոնցից պիտի բխէր նաեւ լայնածաւալ քաղաքական, տնտեսական, ընկերային համակարգեր առաջադրող մի platform, եթէ Հայաստանի անկախութիւնը գոյատեւէր:

9րդ Ընդհ. Ժողովից բխած Բիւրոն, որքան որ կենտրոնացաւ Հայաստանում եւ իր աշխատանքի ու ճիգերի թիրախ դարձրեց Հայաստանը, այնքան աւելի քիչ գործօն ուժ դարձաւ արտասահմանում: Եթէ արտասահմանը գոյատեւեց ու չպառակտուեց, պատճառը այն խանդավառութիւնն էր, որ ստեղծուել էր նորանկախ Հայաստանի շուրջ: Բիւրոյի այս գործելակերպը, իսկ մանաւանդ նրա կառավարութեան ղեկն առնելու եւ ամբողջովին պետական գործերի մէջ մըխրճուելու իրողութիւնը ի հարկէ խիստ քննադատուեց թէ՛ Պուքրէշի եւ Վիեննայի խորհրդաժողովներում եւ թէ՛ Փարիզի 1924ի 10րդ Ընդհ. Ժողովում:

*
* *

Այսօր պատմութիւնը մեզ ընձեռել է մի նոր առիթ մեր հայրենիքում գործելու, խորհրդարանային սահմանադրական համակարգի մէջ մեր դերն ու դիրքը ընտանձնելու: Եւ մեր Ծրագիրը աւելի քան երբեք կարիք ունի պատշաճեցման եւ յստակացման:

Չեմ հաւատում, որ հարցը կայանում է հիմնական փոփոխութիւնների ենթարկելու մեր Ծրագիրը, որի մէջ տեղ են գտել սկզբունքներ, որոնք դեռեւս ամենալաւ գրաւականներն են մեր ժողովրդի գերագոյն շահերի: Պատշաճեցումը պիտի կատարուի, իմ կարծիքով, նախ «Ընդհանուր Տեսութեան» մէջ, ձերբազատելու այդ երկար հատուածը պատմական իրողութիւնների հաստատումներից կամ զանազան գաղափարաբանութիւնների ու վարչակարգերի (դրամատիրական, կայսերապաշտական, ամբողջատիրական) քննական վերլուծումներից, որպէսզի պարզ ու յստակ կերպով մեր Ծրագրի առաջին այս հատուածը խօսի մեր կուսակցութեան հասկացութեան մասին ազգութեան, ժողովրդավարութեան, ընկերվարութեան եւ տնտեսական արդար համակարգի մասին:

Փոփոխութեան պիտի ենթարկուեն մեր պահանջները: Նախ՝ այդ բաժնի ներածականը, որ դարձեալ հայ ժողովրդի իրավիճակի պատմական հոլովոյթն պատկերում: Ներկայ իրավիճակը բնութագրող բաժինը պիտի պատշաճեցուի տիրող իրականութեան: Հայ Դատի քաղաքական, իրաւական հիմնաւորումներ դարձեալ ներկայ իրավիճակի հետ պատշաճեցուելու կարիքն ունեն: Ի զօրու է սակայն մեր նպատակը, որոշ գործնական ուղղութիւնների յաւելումով պիտի դառնայ այժմէական:

Յստակացումի եւ ընդլայնումի կարիք ունի մեր տնտեսական պահանջների հատուածը: Եւ այդ պիտի հիմք ունենայ առաջին հերթին մեր Ծրագրում իր տեղ գտած գաղափարական սկզբունքները՝ ընկերվարական եւ ժողովրդավարական, եւ յետոյ Հայաստանի կենդանի օրինակը: Ծրագիրը պիտի ընդգրկի այնպիսի ընդհանրացումներ, որոնցից կարելի լինի բխեցնել արդար տնտեսական համակարգի առաջադրանքներով մի մանրամասն platform: Իսկ այս բոլորի մէջ մեծ դեր կ՛ունենայ, անշուշտ, թէ՛ Դաշնակցութեան անցած 102 տարիների փորձառութիւնը եւ թէ՛ ապագայ տարիների զանազան երկրներում գործադրուած ընկերվարական հասարակակարգերի տնտեսական կառոյցների ըստ ամենայնի ուսումնասիրութիւնը: